

սաց հովանաւորութեան տակ զնեւ, նոյնպէս և այն լուրը, որ իւր թէ խորասանի վաճառականներէյ շատերը դիմել են ուսուսաց հիւպատոսին պաշտպանութիւն խնդրելով նրանից, հիմբ չունեն:

Այս օրերս Խաղաղայից Թիֆլիս և վերադարձել երգչուհի տիկին Մարիամ Կորգանովա-Սվետադէ: Տիկինը մեր յայտնի երգչուհի Կորգանովա-Տերեանի քոյրն է, իր երաժշտական ուսումը առել է Պարիզ, երգել է թէ Եւրոպայում և թէ Ամերիկայում, և այժմ վերադառնալով իր հայրենիքը, մտադիր է այստեղ մի քանի կոնցերտներ տալ: Ուրախութեամբ կարող ենք ասել, որ տիկին Կորգանովա-Սվետադէ մտադիր է մի կոնցերտ ել տալ յոգուտ սովետներին, եթէ նրա առաջին կոնցերտը աշխուժութիւն և համակրութիւն գտնէ:

Լսում ենք, որ Էլմիմանի ձեմարանի համար պէտք է կազմակերպել ուսուցչական նոր խումբ: Մտադրութիւն կայ աշակերտների թիւը, որ այժմ մօտ 200 է, անպատճառ իջեցնել 100-ի: Առ այժմ յայտնի չէ, թէ ում կը յանձնվի ձեմարանի տեսչի պաշտօնը:

Յունիսի 1-ին Թիֆլիսում կատարվեց Կովկասի կառավարչապետի դեմաստան դերակտոր գնահատման վերաբերյալ Պաշտպան Գեորգի Գեորգի Պաշտպանի թաղութային 10 Ժաման հանգուցեալի բնակարանում հասարակական ընդեր պաշտօնակիցները, բարեկամները և ծանօթները: Տարւ և կէս Ժաման դադարէր դուրս բերելու, և զորն դեկտեմբեր վրայ, որը զարդարված էր պատկերներով: Յուզարկարութիւնը դիմեց զէպի Բաշվիթի եկեղեցին: Թաղման հանդիսին ներկայ էին՝ բացի ուղղափառ հոգեւորականութիւնից, հայ և մասնաւորապէս հոգեւորականութեան ներկայացուցիչները: Կազմակերպութիւնը, բացի հանգուցեալի ազգականներից, Կովկասի կառավարչապետի ամուսին Ե. Բ. Շերեմետովա, կառավարչապետի օգնական կոմս Տատիշչեւ, գեներալներ, և կառավարչական հիմնարկութիւնների ու գործերի զանազան բաժնիներին զինուորները, քաղաքային և հասարակական հիմնարկութիւնների ներկայացուցիչները, օտարերկրացի հիւպատոսները և բազմաթիւ ժողովուրդ, որին հետեւում էր գործը: Պատարագից յետոյ հանգուցեալի մարմինը ամփոփվեց Բաշվիթի եկեղեցու բակում:

Կ. Պոլսի «Հայրենիք» լրագիրը իր մայիսի 14-ի համարում տպագրել է մի վերին աստիճանի ողբերգութեամբ առաջնորդող յօդուած խորին վարդապետ Ստեփանէի մասին, որից մի քանի կտոր առաջ ենք բերում. «Խորին վ. Ստեփանէ հանրածանօթ է մեր մէջ. քանի մը անգամ առիթ ունեցանք մասնաւոր յօդուածներով խօսել այդ տաղանդաւոր վարդապետին վրայ, որ մեր եկեղեցիին ամենին պերճաւոր քարոզիչն է: Աչքերուս առաջն ունենալով այդ վարդապետին աշխատասիրութիւնները, տպագրուած կամ ոչ, կը տեսնեմ թէ ժողովուրդին կրթութեանը համար իր ծրագիրը որքան բազմակողմանի է: Իբր խմբագիր 1865-էն մինչև 1880 երկու հանդէսներու ուղղութիւնը ստեղծ է իր գործունեայ աշխատակցութեամբը մի կտեղ. «Մանկավարժանոց» հրատարակած է 1884-էն 86. Համակերպողական ծրագրերը, յատկապէս հոգեւոր, ծխական և միջնակարգ դպրոցների համար: Թարգմանութիւն մը Սմայլսէ, «Ինչպէս պէտք է ապրել բարդաւոր լինելու համար», տպագրված վարդապետ, և Թոսթոյի «Կրէյցերեան սօստաը», որ Պոլսի տպագրված է հասոյթը յատկացուած Միացեալ Ընկերութեանց: Կը զրէ տիեզերական պատմութեան դասեր, որոնց կը միացնէ մեր հին մատենագրութեան աշխարհաբարի վերածումները, խորհնային տպագրված, փառաւոր Բիւզանդ ձեռագիր պատրաստուած: Եւ այս յիշատակութեանց ցանկը շատ պիտի երկարի, եթէ ուրիշ քերականութիւններն ալ, որոնց մէջ է աշխարհաբարի գերականութիւն մը, մէկիկ մէկիկ թուներ:» Լրագիրը իր յօդուածը վերջացնում է այս խօսքերով. «Ստեփանէի նման վարդապետ մը որ անընդհատ աշխատած, յոգնած, տքնած է ու միշտ անդադար կը վարէ այդ բազմաշխատ կեանքը, կը մնայ զեռ պարզ վարդապետ: Բարդապետը վերջին քառորդ դարու մէջ եպիսկոպոս ձեռնադրուած վարդապետներու արժանիքը այս զրկվածին արժանիքին հետ և պիտի համարուի որ ա-

շառութիւնն ալ իր մեծ բաժինը ունի հայ եկեղեցիին վարչութեան մէջ:

Կովկասեան հանքային ջրերով բռնկվելու համար գնացել են Պիատրգորսկ 577, Էսենտուկի 49 և Ժէլեզնովոյսկ 4, ընդամենը 632 անձինք:

Ղզլարի քաղաքային դռնայի երկու ձայնաւորներ՝ Սերբերիակով և խորով, «Терек. Вѣд.» լրագրի խօսքերով, ուղեւորվում են Պետերբուրգ պատշաճաւոր հիմնարկութիւններում միջնորդելու համար, որպէս զի Ղզլար քաղաքը երկաթուղիական ճիւղով միացվի Պետրովսկայա գծի Կադի-Խարտ կայարանին հետ:

«Արեւելք» լրագիրը հաղորդում է, որ Թիֆլիսի կուսանոցի միաբան, Կոյս Հովսիսիէ Թալիբեան, որը Եւրոստղէմի վանքի համար հանգանակած գումարը անձամբ տարել էր Եւրոստղէմ, ստացել է Եւրոստղէմի պատրիարքից «օրհնութեան կոնդակով» մը հանդերձ աղամանազարդ և ոսկեղօծ արծաթեայ խաչ մը, որ կը պարուհակէ Ս. Հովսիսիէի մատուցելը:

Պարսից Շահի Եւրոպա գնալը, ինչպէս հաղորդում է «Нов. Время» լրագիրը, վերջնականապէս վճարված է: Նաւար-Էդդին Շահը Պետերբուրգ կը գնայ օգոստոսի վերջում և կը մնայ այստեղ մօտ երկու շաբաթ:

Թիֆլիսի աղետականների ընդհանուր ժողովը մայիսի 28-ին կայացած իր նիստում, լսելով իշխան Թումանովի առաջարկութիւնը՝ միջնորդելու կառավարութեան առաջ, որ մեր երկրում ևս մշտնջենական զեմաստիւն հաստատութիւնները, որոնց ընդունել սկզբունքով իշխան Թումանովի առաջարկութիւնը և յանձնել աղետականութեան նահանգական պարագլխին գաւառական պարագլխերին հետ միասին կազմել մի առանձին մասնաժողով՝ մեր մէջ զեմաստիւն մտցնելու խնդրի մանրամասն մշակութեան համար. մի և նոյն ժամանակ պարտաւորեցրեց առաջարկութեան հեղինակին՝ Ներկայացնելու մասնաժողովին այդ խնդրի մասին մանրամասն և պատճառաբանած դեկուցում:

Թիֆլիսի «Եւր. Ծովրանով և ընկ.» առևտրական տունը, «Вестник» լրագրի Երևանի թղթակցի խօսքերով, անցեալ տարվայ ղեկավարներ ամսին սկսեց միջնորդել, որ թոյլ տան Երևանի նահանգի Նոր Բայազէթ գաւառի Գեօկչայ լճի վրայ յոգեկալի բանեցնել: Աչքի առաջ ունենալով, որ միանշաւ շատ ծախսեր են լինելու, վերոյիշեալ առևտրական տունը մօնօպօլիտ է խնդրում 25 տարով:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Կարսում կան շատ վախճառուներ, որոնք խեղճ ժողովուրդի աբխազներ են ծծում: Իրանը աներեկայելի տոկոսներով փողեր են տալիս կարիք ունեցող ժողովուրդին: Այդ վախճառուների զոհերի մեծամասնութիւնը կազմում են զիւզական ազգաբնակչութիւնը, որոնք առանց այդ էլ օրվայ հացի կարօտ են: Այս քանի օրերս տեղական կառավարութիւնը որոշեց երկու ասիականութիւնները՝ Կրիզոր Բոյաճեանին և Մարտիրոս Էֆէնդի խնամարանին՝ աքսորել երեք տարվայ ժամանակով Ռուսաստան՝ խաբկովի նահանգը»:

ՂԱՂԱՅԻՑ Գեորգ քահ. Միտոմանի խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Կարգաւորվ վեհաժողովի կոնդակը՝ մեր սովորաբար հայ եղբայրներին օգնելու մասին այստեղի եկեղեցիներում, յորդոր կարգացի իմ հօտին և ընկերակցութեամբ տիկ. Ե. Խլմիթեանի և պ. Ե. Միշվիլեանի, ժողովարարները 1400 բուրքի, որը և անյապաղ ուղարկեցինք վեհաժողովին: Խնդրելով տպագրել այն երկուողը ի գիտութիւն զղարկներին, յայտնում եմ շնորհակալութիւն նախ՝ մեր հասարակութեանը և երկրորդ՝ երկու վերոյիշեալ անձներին, որ իմ մէջ իրանց քաղցած և ծարաւ եղբայրների, յանձնառան ամենայն պատրաստակամութեամբ մասնակից լինել ժողովարարութեան գործին»:

ԱՐԱՐԱՆԻՑ մեզ գրում են. «Մայիսի 23-ին Ապարանի գաւառի երեք գիւղերի՝ Բաշ-Արարանի, Չւմուրի, Արիւիւշուկի և Արաքաձի արեւելեան կողմերում սարսափելի օրոտից յետոյ կարկուտ

եկաւ. կարկուտը երկու ձև ունէր՝ ձուռձեւ և տափակ, մէջ տեղը չէկ դոյնի, իսկ ծանրութիւնը մօտ 1/4 ֆունտ: Գաշառու գանդոյնից շատերը ապաստանվելին Արարանի ժայռերի տակ, իսկ, զրոստ մնացած մարդկանց և անասուններին մեծ վնաս հասաւ: Չամբուրում երեք անասուն սպլով տուն բերին, մարդկանց գլխին, ձեւերին և որտեղ հարվածել էր, անցվին ուռոյցներ դուրս եկան: Փախուկ հողի մէջն ընկնելիս, կարկուտը խրվում էր մօտ երեք վերջօկ: Կարկուտը Արաքաձի վրա աւելի երկար տեղեց, բայց գիւղի սահմաններում տեղեց մօտ տասն րօպէ: Բարեբաղդաբար Արարանում ցանքերը նոր են սկսել և ցանած արտերը քիչ են, այդ էր պատճառը, որ վերնասը այնքան էլ մեծ չէ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՎ. ԹԻՒՐԿՈՒՅ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սովի մասին նորանոր, տխուր տեղեկութիւններ են ստացվում: Ահա թէ ինչ են գրում Բաղից «Աւետար» լրագրին: «Բաղին, որ կը մաքառի և պիտի մաքառի յօթնութեան դէմ դէթ ցնոր հունձը՝ վերջապէս կը կարօտի բարեարեւելեան օգնութեանց կամ ձեռնառութեանց: Հացի գինն օր քան օր կը բարձրանայ. ցորենի գինն քառասպատկուած և կորեկինը հնգապատկուած է:

«Օրինակ, Գասպան օր կը բաղկանայ իբր 500 տուններ՝ ունի հալիւ 50 խաւով և քրիստոնեայ տուն որ իրենց ապրուստը առատօրէն լեցուցած են: Միացեալ տանց առաւել քան կէսը այժմէն բարձրացուած են իրենց աղաղակները միայն չոր հացի համար: Տեղացի խաւով և քրիստոնեայ բարեւեր անձինք հանգանակութիւն մը բացին: Դպրատան մատոյցը 20-800 դահկան գումարներով ամբողջացուցին 120 ոսկու գումար մը, որով շաբաթ մը ի վեր 150 տանց հաց կը բաշխուի փութերէն: Սակայն դեռ շատ կարօտեալ տուներ, անտես մնալով՝ իրենց չքաւորութեամբ կը տառապին սովաւոր. և սոյն նպաստ քիչ ժամանակ պիտի տեսնեն: Յետ այնու ինչ պիտի լինի թշուառացիներ այս ողորմուկ վիճակը»:

Իսկ խոստից գրում են հետեւեալը. «Յարդ իւրաքանչիւր ընտանիք, ծախելով իր ամէն ունեցած, օրուան նախաճաշին ձեռք կը բերէր: Այժմ ծախսելու իրեն սպառեցաւ, և կարգն եկաւ հողաց սպառման: Կը լսենք սովու գոհնէր և կը տեսնենք մեր աչքով: Օր քան օր կաւենայ անոնց թիւն, և ո՛վ գիտէ ո՛ր պիտի յանգի անոնց վախճան: Օրուան խոսակցութեան առարկայն է հացն և սովանքը: Ամէն օր ունի իր աղետալի պատմութիւն անօրական սովելոց: Այս միջոցիս թափուր են եկեղեցիք պաշտօնանց պահուհի: Մինչև ցայժմ քրիստոնէական համարութեամբ մը տոկացիին ամենադառն չքաւորութեան հիմա կը ցուցնեն թէ ալ չեն կրնար: Ո՛հ, որչափ դժուար է ձեռք բանալ ուրիշին. ուստի կը մնան անկողնոյ մէջ ընդ երկար: Հոն կը տապկուին և կը խորովին իրենց ցաւոց և կսկիծներու մէջ. և կը սպասեն մահանց, որ վերջ տայ այս դառնութեան: Ընդհանուր է աղէտը: Ճիշդ հաշին կուտայ հետեւեալ արդիւնքը. հարկի տուէն չորս կամ հինգ տուն միայն ունի հիմա իր հացն»:

ԱՆԳԼԻԱ

Մայիսի 25-ին վէստմինստերում բացվեց «վերանորոգութեան ազգային դահլիճութեան» կօնֆերենցիան, որին ներկայ էին արմատական կուսակցութեան աչքի ընկնող ներկայացուցիչներից շատերը, որոնց թւում է մի քանի պատգամաւորներ: Առաջին նիստում միաձայն ընդունվեց Լաբուշէրի առաջարկութիւնը, որով նա անհրաժեշտ է համարում լորդերի ժողովի վերացումը և պահանջում է, որ կառավարութիւնը մի օրինադրած առաջարկի, որով լիազօրութիւն տրվի համայնքների ժողովին թագուհու հաստատութեանն առաջարկել այն բիլլերը, որոնք մերժված կամ փոփոխված կը լինեն լորդերի ժողովի կողմից:

Այս ընդունվեց Չարլզ Իրլիի առաջարկութիւնը, որի հիման վրա ընտրողական իրաւունքը պէտք է կախում ունենայ միմիայն անձնական ընդունակութիւններից, և ոչ թէ քաղաքացիների կալուածական դրութիւնից կամ հարստութիւնից: Բացի զրանց մի շարք վճիռներ ընդունվեցին, այն

է՝ օրէնսդրական ճանապարհով սահմանափակել բանւորական ժամերը հանքերում և արդիւնաբերութեան ուրիշ ձիւղերում: Բանւորների հետ զօրաղջ զէպքերի համար գործարանատէրերի պատասխանատուութիւնը և այլն: Ժողովը յայտնեց նոյնպէս իր համակրութիւնը իրանդական ժողովրդին՝ ինքնավարութեանը ձգտելու համար և ցանկութիւն յայտնեց, որ Միացեալ Թագաւորութեան ուրիշ մասերն ևս ինքնավարութիւն ստանան:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԿՈՒՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Ալաշկերտից գրում են. «Այս գաւառի Գայապէկ գիւղի մէջ ապրիլին ցաւալի դէպք մը պատահեցաւ: Արդէն քաղաքայալ վիճակի մէջ գանուող անպէտք չէնք մը, որ վարժարանի յատկացուած էր, նոյն օրը դասախօսութեան միջոցին տեղացող ձիւնախառն յորդաւատ անձրեւներէն դրան կողմէն յանկարծ կը փչի: Երեսուհի չափ անմեղ մահուկներ կը վազեն իրենց սիրելի ուսուցչին. այս վերջինը տեսնելով որ ուրիշ ճար չի կայ իր կուսակը ձեղունէն չզօղել երկու փայտերու տալով ուսանողները կը հաւաքէ իր թեւերուն ներքեւ: Երբ լսեցին ամբողջ գիւղի ժողովուրդն արք և կանայք, տղայք և աղջկուք, մինչև իսկ նորապսակ հարսներ դիմեցին զէպի վարժարան, չէնք ամբողջովին չզօրել էր պատերը զէպի ներս փաժէին, ոչ մի կողմէն ծակ դուռ չէր տեսնուիր և ոչ ալ առաստաղի կողմէն. լաց, ողբ, կոծ, մաղ փետեւել, որը զաւակն կը պոռայ, որը եղբայրս, ուսուցիչը տեսնելով որ այլ ևս չզօրելու փայտ ու հող չի մնաց, տեսնելով որ գերաններու երկուքին մէջմէկ զուխները պատի վրա հաստատված են, ուսանողները ապահով անկիւն մը հաւաքելով մօթին մէջ կաշիաւոր բուխերիկի (ծիկնիւղ) կողմի բարակ պատէն երկաթի ունեւորով քարեր քանդել և ծակ մը բանալով ուսանողները մէկիկ դուրս կուտայ: Բոլորն ալ իրենց ուսուցչներով անմեղա ազատվեցան: Միայն ուսուցչի թեւեր, ողնաշարի ոսկորներն ուսած ու սցած էին, այդ պարունը Միացեալ Ընկերութեան տեղոյս վարժարանի ընթերցաւարներէն է»:

Կ. Պոլսից գրում են. «Հանրածանօթ հայազէտ Տիմիթիւս էֆ. Չուքիթուս մեր պատրիարքարանի վերաբերեալ օրէնքներն ու կանոնները յունարէնի թարգմանելով սկսած է հրատարակել «Եւրիկա»-տիքի Ալիթիա» կրօնական շաբաթաթերթին մէջ, որ յունական պատրիարքարանի պաշտօնական թերթն է: Յոյն թերթերը արտատպելով դայն այդ շաբաթաթերթէն կը գովեն Չուքիթուս էֆէնիսի աշխատութիւնը»:

«Մաքսուտ Սիմօն պէյի վիճակը լաւագոյն է, թէ և առջի գիշեր տեղը քիչ մը աւելի սաստկացած էր: Մի և նոյն բիլլները կը շարունակեն դարմանել հիւանդը: Յաւերը մեղմացնելու համար մօրֆինով ներարկումները կը շարունակուին: Առայժմ զնդակը պիտի չը հանեն: Երեկ Օրթոպիդի Սահակ քահանան Ս. Հաղորդութեան տուաւ Սիմօն պէյի: Պատրիարքը այցելութեան գնաց զնդակահար էֆէնդիին»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Դամասկաւոր դաղարումից յետոյ, Ստամբուլովի «Свобода» օրաթը Սօֆիայում և «ПЛОД ДИВЪ» Ֆիլիպպոպոլում՝ արշաւանք սկսեցին նոր միմիստութեան դէմ, թէպէտ և չափաւոր եղանակով: Ուսանողների ձեռքով ծեծված Սօֆիայի պոլիցիայի նախկին պրէֆէկտ Լուկանով վտանգաւոր կերպով հիւանդ է:

— «Kon. Zeitung» լրագրին Բերլինից հեռագրում են, որ իշխան Բիսմարկի առողջութիւնը շատ վատացել է:

— «Republique Francaise» լրագիրը տպեց մի թղթակցութիւն Կ. Պոլսից, որի մէջ այն վտանգն է յայտնվում, թէ ժամանակով փոքր-Ասիան գերմանական մի մեծ կոյտիւր կը դառնայ: Գերմանացիների արշաւանքը Թիւրքիայի վրա աւելի ևս մեծ չափեր է առնում: Չինարական և քաղաքացիական վարչութեան ըւրր բաժանումները գերմանացիների ձեռքում են: Իշխան Բազովիցի Կ. Պոլսի գաւառից յետոյ, գերմանական այդ արշաւանքը աւելի ևս ուժեղացաւ և շուտով գերմանացիները առաջնակարգ տեղ կը բռնեն Թիւրքիայում:

— Մի քանի ունդարական քաղաքներ, որոնց թւում և Պէշուր, ընտրեցին վեկերէն իրանց պատաւոր քաղաքացի:

